ՏԵՂԵԿԱՆՔ

(Քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող լրացման վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2021 թվականի հունիսի 30-ին

Հոդված 288 Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության վերաբերյալ որոշումը

1. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ երեք որոշումներից մեկը.

1) միջնորդությունը մերժելու մասին.

2) միջնորդությունը մասնակի բավարարելու մասին.

3) միջնորդությունն ամբողջությամբ բավարարելու մասին:

2. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշումը, եթե՝

1) հայտնաբերում է սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված որևէ հանգամանք.

2) չի հաստատվում մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը.

3) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, իսկ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառման անհրաժեշտության և հնարավորության հարցը ենթակա է լուծման վարույթի համապատասխան հանրային մասնակիցների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում.

4) առկա է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, և չի հիմնավորվել այդ վտանգը չեզոքացնելու հնարավորությունը.

5) հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած:

3. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը, եթե՝

1) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ.

2) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել միջնորդված խափանման միջոցի առավել մեղմ պայմաններով կիրառմամբ (առավել կարճ ժամկետով կամ մեղադրյալի համար առավել բարենպաստ պայմաններով):

4. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված որոշումը, եթե գալիս է հետևության, որ մեղադրանքի կողմը սույն օրենսգրքով սահմանված կարգով պատշաճորեն հիմնավորել է միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը և իրավաչափությունը միջնորդված պայմաններով:

5. Եթե դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված որոշումներից որևէ մեկը, ապա դրանում հստակորեն սահմանում է կիրառվող խափանման միջոցի տեսակը և պայմանները:

6. Եթե դատարանը կայացնում է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում, ապա մեղադրյալի հիմնավոր միջնորդության հիման վրա իրավասու է վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելու ձեռնարկելու կալանավորվածի խնամքի տակ գտնվող անչափահաս կամ անաշխատունակ անձանց խնամքի կամ գույքի պահպանության համար անհրաժեշտ միջոցներ:

7. Եթե դատարանը պարզում է, որ ձերբակալման ընթացքում խախտվել են ձերբակալված անձի իրավունքները, ապա որոշմամբ՝

1) հաստատում է այդ փաստը.

2) ձերբակալված անձին պարզաբանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հատուցում ստանալու կարգը.

3) խախտման փաստի կապակցությամբ իրավական ընթացակարգ սկսելու նպատակով դիմում է իրավասու մարմիններ կամ պաշտոնատար անձանց.

4) անհրաժեշտության դեպքում իրավասու մարմիններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել ձերբակալված անձի իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ:

8. Որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է դատական նիստում: Որոշումը պատշաճ ձևով տրվում է վարույթի մասնակիցներին ոչ ուշ, քան այն հրապարակելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում: Որոշման պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է այն մեղադրյալի հաշվառման հասցեով, որի գտնվելու վայրը հայտնի չէ:

9. Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշման վերաբերյալ քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է մեղադրյալի աշխատանքի վայրի վարչակազմին:

10. Տնային կալանքը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշման վերաբերյալ քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է մեղադրյալի աշխատանքի վայրի վարչակազմին՝ նշելով դատարանի որոշմամբ կիրառված սահմանափակումների բնույթն ու ծավալը:

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**